

## Դրամաշնորհային հաշվետվություն N 1

### 1. Ընդհանուր տեղեկատվություն

Ծրագրի անվանում	«Տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային խնամքի ծառայություններ»
Դրամաշնորհի N	Լոտ 20. Կոտայքի մարզ - Հրազդան
Դրամաշնորհատու կազմակերպություն	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
Դրամաշնորհառու կազմակերպություն	«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն
Ծրագրի իրականացման ժամանակահատված	01.01.-31.12.2022թթ.
Հաշվետու ժամանակահատված	01.01.-31.03.2022թթ.
Ներկայացման օր	08.04.2022թ.
Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)	Սիրանուշ Սողոմոնյան Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր

## 2. Բովանդակային հաշվետվություն

2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- խաղեր, հեռուստադիտում,
- խմբակներ,
- մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ,
- տաք ճաշի տրամադրում,
- ըստ անհրաժեշտության՝ լվացքի ծառայության տրամադրման կազմակերպում:

2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների , նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:

- Սոցիալական աջակցության տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից հաշվետու ժամանակահատվածում իրականացվել է թվով 66 կարիքի գնահատում և վերագնահատում: Սոցիալական աշխատողի կողմից կենտրոնում իրականացված ընդունելությունների, անհրաժեշտության դեպքում նաև տունայցերի միջոցով անհատական և խմբային աշխատանքների արդյունքում մասնագիտական աջակցություն է տրամադրվել թվով 66 շահառուի՝ ներառյալ 4 դեպքի վարման իրականացում (նոր անձնագրի ստացման կազմակերպում, ավանդի փոխհատուցման կազմակերպում, թնտանեկան նպաստի համակարգում վերափաստագրման կազմակերպում):
- Հոգեբանական աջակցության շրջանակում թվով 42 շահառուի տրամադրվել է հոգեբանական խորհրդատվություն, կազմակերպվել են նաև հոգեբանի հետ թվով 11 խմբային հանդիպումներ՝ միտված շահառուների հոգեբանական կայուն վիճակի պահպանմանը, սթրեսակայության ձևավորմանը և պահպանմանը, ինչպես նաև հոգեկան գործընթացների (հիշողություն, մտածողություն, ուշադրություն, երևակայություն խոսք հաղորդակցում) զարգացմանը:

- Իրավական աջակցության շրջանակներում շահառուներին շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների մասին:
- Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում բուժքրոջ կողմից իրականացվել է թվով 66 շահառուի ընդունելության կազմակերպում, որից 5 շահառուի ուղղորդում բժշկական այլ հաստատություններ: Բժշկական աջակցության շրջանակներում շարունակաբար իրականացվում է շահառուների առողջական վիճակին հետևում, առողջ ապրելակերպի խթանում շահառուների շրջանում:
- Հաշվետու ժամանակահատվածում ցերեկային կենտրոնում կազմակերպվել է շահառուների ժամանցը՝ ուսուցողական, հիշողության ամրապնդմանն ուղղված խաղերի, հեռուստադիտումների և դրանց համապատասխան քննարկումների իրականացման միջոցով:
- Կենտրոնում գործել է շահառուների հետաքրքրություններին համապատասխանող 3 խմբակ (առողջ ապրելակերպ, արտթերապիա, առողջական ֆիզկուլտուրա, հոգեբանական), որին մասնակցել է 26 շահառու:
- Կազմակերպվել է թվով 5 մշակութային միջոցառում. Հայրենիքի պաշտպանության օր, 2 միջոցառում նվիրված կանանց միջազգային օրվան, Երևանի Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում «Տիկնայք և պարոնայք» ներկայացման դիտում, որոնց մասնակցել են 42 շահառու: Բացի մշակութային միջոցառումների հաշվետու եռամսյակի ընթացքում 2 անգամ կազմակերպվել է շահառուների այց վարսավիրանոց, որտեղ շահառուներին անվճար սպասարկել են:
- Կենտրոնում շաբաթական 5 օր տրամադրվել է տաք ճաշ, սուրճ և քաղցրավենիք:

Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)

Հաշվետու ժամանակահատվածում Հրազդանի ցերեկային կենտրոնի ֆեյսբուքյան էջում տեղադրվել են տարբեր նյութ, որից առաջինը ներկայացնում է տարեցների առողջ ապրելակերպը ցերեկային կենտրոնում (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://fb.watch/boAHNRHTZB/>, իսկ երրորդը՝ ֆոտոնկարներ ցերեկային կենտրոնի առօրյայից (տե՛ս հետևյալ հղումով՝ <https://www.facebook.com/2314448958803600/posts/3085043871744101/>):

<https://www.facebook.com/2314448958803600/posts/3125335207714967/>  
<https://www.facebook.com/2314448958803600/posts/3130804537168034/>  
<https://www.facebook.com/2314448958803600/posts/3131777203737434/>

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղաժ դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում միակ խնդիրը, որին բախվել է Հրազդանի ցերեկային կենտրոնը դա դիմող շահառուների ուղեգրման, շահառուների վերաուղեգրման ընթացքում առաջ եկած բարդություններն են, մասնավորապես՝ բժշկական հետազոտությունը: Շահառուների կենտրոն հաճախելիության օրվա կտրվածքով ժամանակահատվածը զգալի կրճատվել է՝ սուր շնչառական հիվանդություններով, ինչպես նաև թագավարակով վարակվելու մտավախությունից ելնելով:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալական աջակցության տրամադրում,
- հոգեբանական աջակցության տրամադրում,
- իրավական աջակցության տրամադրում,
- բժշկական օգնության տրամադրում,
- խաղեր, հեռուստադիտում,
- խմբակներ,
- մշակութային միջոցառումներ, հանդիպումներ և էքսկուրսիաներ,
- տաք ճաշի տրամադրում,
- ըստ անհրաժեշտության՝ լվացքի ծառայության տրամադրման կազմակերպում:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

«Առաքելություն Հայաստան» կազմակերպության կողմից հաշվետու եռամսյակում կազմակերպվել է հանդիպում Միասնական սոցիալական ծառայության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, ինչպես նաև գործընկեր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ուղղված կառավարության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերի շրջանակներում շահառուների ուղեգրման ընթացքում առաջացող դժվարություններին: Հանդիպման ընթացքում քննարկվել են համատեղ համագործակցության և առկա խնդիրների հաղթահարմանն ուղղված մեխանիզմների մշակման հետ կապված հարցեր:

Նախաձեռնվել է հանդիպում Հրազդան համայնքի ղեկավար Ս. Միքայելյանի հետ ուղղված կառավարության կողմից ֆինանսավորվող դրամաշնորհների շրջանակներում իրականացվող ծրագրերի շրջանակներում չափորոշիչների ներկայացման եվ ընդգրկման ենթակա անձանց տեղեկատվության ապահովման մեխանիզմների հետ կապված հարցեր:

Նախաձեռնվել է հանդիպում Հրազդանի բժշկական կենտրոնի տնօրեն Կ. Սահակյանի հետ՝ ուղղված 65 տարեկանից բարձր ընտանեկան նպաստ համակարգում ցածր միավոր ունեցող թոշակառուների բժշկական վճարովի հետազոտության խնդիրների լուծմանը:

Նախաձեռնվել է հանդիպում Հրազդանի պատգամավոր Լիլիթ Ստեփանյանի հետ՝ ուղղված տարեցների մասնագիտացված բժշկական կենտրոնների հասանելիության խնդիրների հետ կապված, արդյունքում ձեռք է բերվել համաձայնություն Հրազդան եվ Չարենցավան համայնքների թվով 20 լսողական խնդիրներ ունեցող տարեցներին անվճար տնային պայմաններում հետազոտություն կազմակերպելու եվ լսողական սարքեր տրամադրելու վերաբերյալ:

#### ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի  
նախարարություն

Նախարարության գլխավոր քարտուղար՝

\_\_\_\_\_  
(ստորագրություն) Ս.Մուրադյան  
Կ. Տ.

#### ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ

Նախագահ՝

\_\_\_\_\_  
(ստորագրություն) Ե.Մխիթարյան  
Կ. Տ.